## Արձանագրություն N 2-3

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/10 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

01.07.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Ջոհրաբյան |
| Անդամներ՝ | Ն. Ղազարյան |
| | Հ. Մնացականյան |
| | Էդ. Առուստամյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Հյուսիսյանը

### 1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման գնահատման մասին

--------------------------------------------------------------------------------

(Ա. Ջոհրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակից «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 29.06.2026թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրա կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

### 2. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ

--------------------------------------------------------------------------------

(Ա. Ջոհրաբյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի, «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ կոնսորցիումի, «ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են բավարար:

2.2 Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին՝

| Գնման առարկա | Ընտրված մասնակից | Այդպիսին չճանաչված մասնակիցներ |
|---|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման աշխատանքներ | «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ | «Քյավառ Սերվիս» ՍՊԸ և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ կոնսորցիում<br><br>«ՇԻՆ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Ա. Ջոհրաբյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջոհրաբյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ա. Ջոհրաբյան

Անդամներ՝ ------------------------------ Ն. Ղազարյան

------------------------------ Հ. Մնացականյան

------------------------------ Էդ. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------ Ա. Մանուչարյան